

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Կը Շնորհաւորէ Կիպրոսի Նախագահին Վերընտրութիւնը

Երէկ՝ 5 Փետրուար 2018-ի առաւօտեան Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, Կիպրոսի Հանրապետութեան նախագահ՝ Նիքոս Անասթասիատիսի վերընտրութեան առիթով անոր ուղղուած շնորհաւորական գիրին մէջ, Վեհափառը գնահատանք յայտնած է նաեւ Կիպրոսի հայութեան նկատմամբ նախագահին ցուցաբերած հոգածութեան եւ հայ դատին նկատմամբ անոր ունեցած զօրակցութեան համար:

Ո՛չ աւելի եւ ո՛չ պակաս: Ինչո՞ւ ի մէջ այլոց՝ չի յիշել Մելգոնեանի կարեւորութիւնը Արեւմտահայերէնի պաշտպանութեան համար, եթէ իրապէս մտահոգ են այս հարցով:

Անօթ պիտի ըլլար այդ մասին խօսիլ, չենք կրնար ըմբռնել մեր մեծերուն նկատողութիւնը:

Տակաւին մէկ շաբաթ առաջ՝ Չորեքշաբթի, 31 Յունուար 2018-ին Անթիլիասի մայրավանքին մէջ, Արեւմտահայերէնի Պաշտպանութեան Յանձնաժողովը հանդիպում մը ունեցաւ Վեհափառին նախագահութեամբ, ուր ներկայ էր, յատկապէս այս առաքելութեամբ՝ ՀՀ Գիտութիւններու ազգային ակադեմիայի «Հրաչեայ Աճառեան»ի անուան լեզուի հիմնարկի տնօրէն Փրոֆ. Վիքթոր Կատվալեան:

Միայն կը կարդանք թէ հանդիպումներ, ժողովներ տեղի ունեցած են, բայց ո՛չ մէկ հաղորդագրութիւն կամ ինչ որոշումներ, կարծիքներ այդ մասին առնուած են: